

**ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԵՐՈՒՄ  
ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ 2006-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ  
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

### Ներածություն

ՀՀ Արարատի և Լոռու մարզերում վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության բարեփոխումների 2006-2010 թթ. ռազմավարության և կրթական չափորոշիչների ներդրման փորձնական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսական և մեթոդական օժանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական նպատակը երեխաների վաղ մանկության զարգացման ոլորտում, նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է՝ հատուկ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը: Սույնը ամրագրված է նաև Աղքատության կրճատմանն աջակցության 2-րդ վարկային ծրագրում, որում սահմանված են հետևյալ ցուցիչները. 3 տարվա ընթացքում 5 տարեկանների ընդգրկվածությունը հասցնել 30%-ի, ընդ որում նրանց 50%-ը աղքատ ընտանիքներից:

Այս ծրագիրը մշակվել է համաձայն «Վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարության» և

«Աղքատության կրճատմանն աջակցության» 2-րդ վարկային ծրագրի պահանջների:

Ծրագիրը նպատակաուղղված է.

- նախադպրոցական կրթական ծառայություններում երեխաների ընդգրկվածության աճին,
- նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացմանը,
- այլընտրանքային ցածր արժողությամբ նախադպրոցական ծառայությունների ներդրմանը,
- ծնողների և համայնքների մասնակցության բարձրացմանը,
- նախադպրոցական կրթության, ծառայությունների և դրանց իրականացման պայմանների համապատասխանեցմանը պետական չափորոշիչներին:

Առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքի երեխաների՝ 5 տարեկանների, տարրական կրթությանը արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը, ինչը կապահովի երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար, կնպաստի ետ մնացող աշակերտների թվի նվազեցմանը, ինչպես նաև կայուն հիմքեր կստեղծի նրանց անձնային ու սոցիալական հմտությունների զարգացման և ձևավորման համար: Նախադպրոցական կրթությունը ունի նաև հսկայական տնտեսական նշանակություն: Այս ոլորտում կատարված ներդրումները ունենում են երկարաժամկետ ազդեցություն հասարակության և տնտեսության զարգացման վրա: Ըստ ուսումնասիրությունների երեխաների վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության մեջ ներդրված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարը հետագայում բերում է մոտ 7 ԱՄՆ դոլարի արդյունք:

## **Հիմնախնդիրները և դրանց լուծմանը նպաստող գործոնները**

### Հիմնախնդիրները

5 - 6 տարեկանների կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները հիմնականում հետևյալն են.

- երեխաների ընդգրկվածության խիստ ցածր մակարդակը հատկապես գյուղական բնակավայրերում (միջինում՝ 8.1%),
- նախադպրոցական հաստատությունների անբավարար ցանցը, մատուցվող ծառայությունների ցածր որակը և դրանց անմատչելիությունը աղքատ ընտանիքների երեխաների համար,
- նախադպրոցական կրթության ուսումնական ծրագրերի և երեխաների հետ աշխատելու մեթոդների միօրինակությունը, հնացածությունը, երեխայակենտրոն մոտեցումների ներդրման խիստ անբավարարությունը,
- նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազայի բարոյական և ֆիզիկական մաշվածությունը,
- ֆինանսավորման անբավարարությունը և համայնքային բյուջեների սահմանափակ հնարավորությունները,
- երեխաների վաղ զարգացման և նախադպրոցական կրթության վերաբերյալ ծնողների գիտելիքների և հմտությունների պակասը,
- համայնքների և ծնողական նախաձեռնությունների պակասը,
- նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ցածրարժեք ծառայությունների անբավարարությունը,
- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման վերաբերյալ տեղեկությունների և տվյալների բացակայությունը,
- վիճակագրական-վերլուծական աշխատանքների անբավարար վիճակը, և այլն:

### Հիմնախնդիրների լուծմանը նպաստող գործոններ

Զնայած վերոնշյալ հիմնախնդիրների առկայությանը, վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության բարեփոխումների անհրաժեշտությունը հրատապ է և դրանց իրականացման համար կան բավարար նախադրյալներ, ինչպիսիք են.

- «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ Օրենքի ընդունումը,
- նախադպրոցական հաստատությունների ցանցի առկայությունը և ֆինանսավորման աճի միտումները վերջին մի քանի տարիներին,
- դպրոցների առկայությունը ՀՀ գրեթե բոլոր համայնքներում,
- ՀՀ պետական կրթակարգի ընդունումը, որը հաստատում է կրթության շարունակականության ապահովման վերաբերյալ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը և սահմանում է նախադպրոցական կրթության չափորոշիչների ձևավորման սկզբունքները,
- տարբեր միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Վորլդ Վիժն , Քայլ առ Քայլ, Փրկեք երեխաներին, Պարենի համաշխարհային ծրագիր և այլն) կողմից իրականացված ծրագրերը և դրանց հետևանքով արձանագրված ընդգրկվածության աճն ու նոր՝ քիչ ծախսատար մոդելների ներդրման ուղղությամբ ձեռք բերված որոշ փորձառությունը,
- պետական բյուջեից յուրաքանչյուր տարի նախադպրոցական հաստատություններում չընդգրկված երեխաների դպրոցին

նախապատրաստման 3-ամսյա դասընթացների ֆինանսավորման նախկին փորձը,

- կրթության խիստ կարևորությունը հայ ծնողի համար,
- ծնողների պատրաստակամությունը՝ մասնակցելու իրենց երեխաների կրթությանը,
- դպրոցների շահագրգռվածությունը՝ ընդունելու լավ պատրաստված առաջին դասարանցիներ և ավելացնելու իրենց դպրոցում սովորող երեխաների թիվը:

### **Փորձնական ծրագրի նպատակները**

#### *Ծրագրի գլխավոր նպատակն է.*

Փորձարկել «Վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության բարեփոխումների 2006-2010 թվականների ռազմավարությունը», մշակել և ներդնել նոր մոտեցումներ վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության իրականացման ոլորտում՝ ավելացնելով աղքատ ընտանիքների 5-6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը :

Ինչպես նաև, փորձարկել տարբեր մոտեցումներ և Հայաստանում նախադպրոցական կրթության համակարգի հետագա զարգացման նոր և արդյունավետ մոտեցումների հիմք դնել:

#### *Ծրագրի խնդիրներն են՝*

- Նպաստել և աջակցել երեխաների նախադպրոցական կրթության իրականացման նոր՝ ցածրարժեք ծառայությունների ներդրմանը, որոնք մատչելի կլինեն բնակչության առավել անապահով խավերին, ինչպես նաև կնպաստեն գործող հաստատություններում երեխաների ընդգրկման աճին:
- Աջակցել դպրոցին նախապատրաստման ու երեխաների ընդհանուր զարգացմանն ուղղված նախադպրոցական երեխայակենտրոն կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:
- Բարելավել համայնքների կարողությունները և խթանել նրանց նախաձեռնությունները ուղղված նախադպրոցական կրթական մատչելի ծառայությունների մատուցմանը:
- Խրախուսել և աջակցել ծնողներին հարստացնելու իրենց գիտելիքները և մասնակցելու իրենց երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպմանը:
- Փորձարկել նախադպրոցական կրթության նոր մշակվելիք չափորոշիչները, ապահովելով երեխայակենտրոն միջավայր, որակյալ կրթություն ու խնամք՝ երեխաների հետ աշխատանքի նորագույն և արդյունավետ մեթոդների ներդրմամբ:
- Բարելավել նախադպրոցական կրթության և վաղ մանկության զարգացման օրենսդրական դաշտը՝ դարձնելով այն առավել նպաստավոր նոր նախաձեռնությունների, մատչելի ծառայությունների իրականացման և ներդրումների համար:

### **Ծրագրի նկարագրությունը**

Փորձնական ծրագիրը նախատեսում է առաջին հերթին աջակցություն ցուցաբերել 5/6 տարեկանների նախադպրոցական կրթության կազմակերպմանը, ընդգրկվածության ավելացմանը, նոր այլընտրանքային ծառայությունների ներդրմանը:

Փորձնական ծրագրում որպես հիմնական թիրախային խումբ են ընտրվում աղքատ, անապահով ընտանիքները և դրանց երեխաները: Ծրագրին կարող են մասնակցել համայնքներ, նախադպրոցական հաստատություններ, դպրոցներ, այլ կրթական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ, անհատներ և ծնողների խմբեր, որոնք կներկայացնեն նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման պլաններ:

Առանձին ծրագրերը ըստ համայնքների կարող են տարբեր լինել և այն կախված կլինի համայնքի ներկայացրած առաջարկից, նրա մասնակցության ձևից, երեխաների թիրախային տարիքային խմբերի ընտրությունից: Կարևորն է, որ համայնքը և ծնողներն իրենք որոշեն իրենց համար առաջնահերթ կարիքները, ծառայությունների նախընտրելի և իրականացնելի տարբերակը, իրենց մասնակցության ձևը, ներդրումների չափն ու եղանակը: Ծրագրերի իրականացմանն աջակցող կազմակերպությունները, ԿԳ նախարարությունը, մարզպետարանների կրթության վարչությունները ցույց կտան անհրաժեշտ տեխնիկական/մեթոդական աջակցություն, առաջարկների մշակման ու ներկայացման, ինչպես նաև հետագայում ծրագրերի իրականացման ընթացքում:

Փորձնական ծրագրի իրականացման մեկ այլ տարբերակ կարող է լինել ԿԳ նախարարության, մարզպետարանների, համայնքների և հաստատությունների համագործակցությամբ թիրախային համայնքների որոշումը և ծրագրերի համապատասխան մոդելների մշակումը, որը մասամբ կֆինանսավորվի պետական բյուջեից՝ «Նախադպրոցական ավագ տարիքային խմբի երեխաներին դպրոցին նախապատրաստելու» ծրագիր անվամբ: Այդ միջոցները կհատկացվեն այն մանկապարտեզներին կամ դպրոցներին, որոնք կներկայացնեն առավել իրատեսական, քիչ ծախսատար ծրագրեր, որոնցում հաշվի առնված կլինեն փորձնական ծրագրի առաջնահերթությունները և որոնք ուղղված կլինեն երեխայի ընդհանուր զարգացման և դպրոցին նախապատրաստման փորձնական ուսումնական ծրագրի իրականացմանը: Այսպիսի ծրագրերի տևողությունը կարող է լինել 3-ամսից մինչև 1 տարի:

#### Ուսումնական ծրագիր և բովանդակություն

Նախարարությունը կքննարկի և կհաստատի 5/6 տարեկանների՝ անցումային կրթական չափորոշիչներ և ըստ դրա կմշակվի փորձնական ուսումնական/կրթական ծրագրի նախագիծ: Այդ ծրագիրը պարտադիր կլինի այն հաստատությունների/կազմակերպությունների համար, որոնք կիրականացնեն նախադպրոցական կրթություն: Այն պետք է ապահովի չափորոշիչներով սահմանված նվազագույն պահանջները:

Ենթադրվում է, որ փորձնական ուսումնական ծրագրով ուսուցում կիրականացվի գործող նախադպրոցական հաստատությունների կամ դպրոցների բազայի վրա՝ ոչ պակաս օրական 2 ժամ տևողությամբ և տարվա ընթացքում 90 օր: Այն կարող է իրականացվել նաև տարբեր կենտրոնների բազայի վրա, որոնք արդեն ստեղծվել են տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունքում, կամ կստեղծվեն փորձնական ծրագրի ընթացքում:

#### Ծրագրի իրականացման հնարավոր մոդելները

Ծրագրի իրականացման հնարավոր մոդելներն ընտրելիս պետք է հաշվի առնել, որ համայնքները ըստ կրթական հաստատությունների առկայության երեք տիպի են.

- ա) համայնքում կա նախադպրոցական հաստատություն և դպրոց,
- բ) համայնքում չկա նախադպրոցական հաստատություն, կա դպրոց,
- գ) համայնքում չկա, ոչ նախադպրոցական հաստատություն և ոչ էլ դպրոց:

Նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպման վայր կարող են լինել.

- տվյալ համայնքում գործող նախադպրոցական հաստատությունում,
- տվյալ համայնքում գործող դպրոցը/ները,
- տվյալ համայնքում գործող այլ կրթամշակութային կամ առողջապահական հիմնարկները,
- այլ:

Ընդ որում, նույնիսկ մանկապարտեզի կամ դպրոցի առկայության դեպքում կարող են ընտրվել այլ վայրեր՝ հիմք ընդունելով ներկայացված առաջարկները:

Ծրագրի շրջանակներում քննարկվելու են հետևյալ հիմնական մոդելները

1. դպրոցներում՝ 2-3 ժամ տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց սննդի, կամ երեխաները սնունդը բերում են իրենց հետ),
2. նախադպրոցական հաստատություն հաճախող երեխաների թվի ավելացում՝ այլընտրանքային ծառայությունների ներդրման միջոցով.
  - ա. առաջին հերթին անապահով ընտանիքների երեխաների ընդգրկմամբ՝ նոր խմբերի բացման կամ թերկոմպլեկտավորված խմբերի լրացման միջոցով,
  - բ. նախադպրոցական հաստատություններում 2-3 ժամ տևողությամբ նախադպրոցական կրթական ծառայությունների կազմակերպում (առանց սննդի, կամ երեխաները սնունդը բերում են իրենց հետ),
  - գ. երկարացված օրով ծառայությունների մատուցում՝ աշխատող ընտանիքների երեխաներին
3. ծնողական կրթության կենտրոնների հիմնում
4. այլ:

Ըստ համայնքների մոդելների ընտրության ժամանակ հաշվի կառնվեն համայնքների կարիքները, հնարավորությունները, արդյունավետության և շարունակականության ապահովման ռեսուրսներն ու զարգացման հեռանկարները.

Նշված մոդելների մի մասը հնարավոր է իրականացնել նվազագույն ծախսերով, եթե ծրագրերում ակտիվորեն ներգրավվեն հենց երեխաների ծնողները, ընտանիքների անդամները՝ որպես խոհարարներ, դայակներ, իսկ կրթություն ունենալու դեպքում նաև մանկավարժներ, որոնք կստանան անվճար վերապատրաստումներ և խորհրդատվություն: Նկատի ունենալով նաև դպրոցների դասավարների, տարրական դասարանների այլ ուսուցիչների, դպրոցների տնօրենների շահագրգռվածությունը ակտիվ/մտածող/համագործակցող/ստեղծագործող առաջին դասարանցիներ ունենալու հարցում, կարելի է փոքր խրախուսանքով կամ բարեգործական հիմունքներով ներգրավել նաև նրանց, ինչպես նաև այլ մասնագետների և խորհրդատուների:

## **Ծրագրի գործողությունների համառոտ նկարագիրը**

**Ուսումնասիրություններ և կարիքների գնահատում** ՀՀ մարզերում՝ պարզելու աղքատ ընտանիքների երեխաների ընդգրկվածության տոկոսը նախադպրոցական կրթական հաստատություններում կամ նախադպրոցական կրթական այլընտրանքային ծառայություններում, մատուցվող ծառայությունների մատչելիությունը, ծնողների ակնկալիքները, նրանց մասնակցության հնարավորությունները: Հարկ է հստակեցնել նաև ընդգրկվածությունը ըստ քաղաք-գյուղ բաժանման՝ հիմնական ցուցանիշները սահմանելու նպատակով: Անհրաժեշտ է նաև ճշտել երեխաների ընդգրկվածությունը ըստ առանձին տարիքային խմբերի (4-տարեկան, 5-տարեկան, 6-տարեկան): Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները թույլ կտան բարելավել պլանավորումը, հստակեցնել ծրագրի հիմնական ցուցանիշները, պլանավորել համապատասխան ծախսերը առավել մեծ ճշգրտությամբ, ինչպես նաև բարձրացնել ծրագրի արդյունավետությունը:

**Փորձնական ուսումնական ծրագրերի մշակում 5/6 տարեկանների համար**, ինչը պետք է բխի նախադպրոցական կրթության չափորոշիչներից՝ ապահովելով օրենքով և

ռազմավարական ծրագրով նախադպրոցական կրթությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես՝

- նախադպրոցական տարիքի առանձնահատկությունների հաշվառում, տարիքային այդ խմբի երեխաների բնականոն զարգացում
- սահուն անցում տարրական դպրոց
- ուսումնական ծրագրի նվազագույն ծավալի սահմանում՝ հիմք ընդունելով նախադպրոցական չափորոշիչները:

### **Ծրագրերի մասնակիցների ընտրություն**

Փորձնական ծրագրին կարող են մասնակցել համայնքներ, ծնողների խմբեր, դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ:

Ծրագրերի ընտրությունը կիրականացվի հետևյալ երեք գլխավոր չափանիշների հաշվառմամբ.

- ներկայացրած առաջարկների արդյունավետությունը և համապատասխանությունը ծրագրի նպատակներին՝ կատարելով դրանց համեմատական վերլուծություն,
- ներկայացված ծրագրերի հիմնավորվածությունը և շարունակականության հեռանկարները,
- ուսումնասիրության և մոնիթորինգի արդյունքները:

Համայնքները ուսումնասիրության արդյունքում կբաժանվեն հետևյալ երեք ենթախմբերի.

- քաղաքային համայնքներ
- գյուղական համայնքներ, որտեղ կան և՛ դպրոցներ, և մանկապարտեզներ
- գյուղական համայնքներ, որտեղ չկան մանկապարտեզներ

Այս բաժանումը նախատեսվում է այն նպատակով, որպեսզի ապահովվի տարբեր տիպի համայնքների ընդգրկվածությունը ծրագրում՝ ստեղծելով մասնակցության հավասար հնարավորություններ նշված տարածաշրջանների բոլոր համայնքների համար՝ անկախ դրանց ֆինանսական կարողություններից, աղքատության աստիճանից, կադրային և այլ ռեսուրսներից:

Այսպիսով, կձևավորվեն համայնքների մի քանի խմբեր, և ծրագրերի ընտրությունը կկատարվի ներխմբային մրցույթում:

### **Ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավա-նորմատիվային փաստաթղթերի մշակում**

Ծրագրերի իրականացման դեպքում կարող են առաջանալ խնդիրներ, որոնք չեն կարգավորվում ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես այնպիսի ծրագրերի իրականացման դեպքում, որոնք չեն համարվի դպրոցի կամ մանկապարտեզի կողմից մատուցվող ծառայություններ: Ծրագրի իրականացման ընթացքում ավելի ակնհայտ կդառնա, թե ինչպիսի օրենսդրական փաստաթղթերի կարիք կա, կամ թե ինչ փոփոխությունների անհրաժեշտություն կա արդեն գործող իրավանորմատիվային փաստաթղթերում:

Այսպիսով, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ իրավանորմատիվային փաստաթղթերը կմշակվեն նախապես և իրականացման ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

### **Ծրագրում ընդգրկված հաստատությունների կադրերի և այլ մասնակիցների վերապատրաստում, այդ թվում՝**

- խորհրդատվություն,

- ուսումնական նյութերի մշակում,
- դասախոսների պատրաստում,
- մանկավարժների և վարչական կադրերի վերապատրաստում
- այլ մասնակիցների վերապատրաստում՝ օգտագործելով տարբեր կազմակերպությունների կողմից ստեղծված ռեսուրսները:

#### **Համապատասխան պայմանների ստեղծում, այդ թվում՝**

- շենքերի կամ անհրաժեշտ տարածքների նորոգում, վարձակալում, կամ անհատույց տրամադրում՝ կախված նախադպրոցական կրթական ծառայության մատուցման եղանակից,
- փափուկ և կոշտ գույքի ձեռքբերում և կահավորում,
- տեխնիկական միջոցների և սարքավորումների ձեռքբերում,
- ուսումնադիտողական պարագաներով, խաղալիքներով և այլ անհրաժեշտ միջոցներով ապահովում,
- մանկական հրապարակների ստեղծում:

#### **Ծրագրի գնահատում, հետադարձ կապի ապահովում**

Փորձնական ծրագրի իրականացման տարբեր փուլերում անհրաժեշտ կլինի իրականացնել միջանկյալ գնահատումներ, որոնք թույլ կտան բարելավել իրականացվող ծրագրերը: Դրանք անհրաժեշտ տեղեկություններ կտան և՛ ծրագրին իրականացնող կազմակերպություններին, և՛ համայնքներին, և՛ այլ մասնակիցների ու շահառուներին: Բացի այդ կիրականացվեն ամփոփիչ գնահատումներ, որոնք կներառվեն հաշվետվությունների մեջ և կնպաստեն ծրագրերի բարելավմանն ու հաջորդ փուլերի առավել արդյունավետ պլանավորմանը:

#### **Ծրագրի իրականացման վայրերը**

Նախատեսվում է փորձնական ծրագրին իրականացնել Արարատի (Արարատի մարզ) և Սպիտակի (Լոռու մարզ) տարածաշրջաններում: Տարածաշրջանների ընտրությունը, մասնավորապես, պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Արարատի մարզում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից 3 համայնքների 5 նախադպրոցական հաստատություններում իրականացվել են նախադպրոցական կրթությունը մատչելի դարձնելու և ընդգրկվածությունն ավելացնելու փորձնական ծրագրեր: Դրանց արդյունքում ձևավորվել է համայնքների դրական վերաբերմունք, ձեռք է բերվել համապատասխան փորձառություն և կա այդ ծրագրերի ընդլայնման առաջարկություն:
- Լոռու մարզը ընդգրկված է սոցիալապես առավել անապահով 5 մարզերի թվում (ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից անցկացված հետազոտության արդյունքների) և այնտեղ ընդգրկվածությունն ամենացածրերից մեկն է Հանրապետությունում: Իսկ Սպիտակի տարածաշրջանը միակն է հանրապետությունում, որտեղ ոչ մի գյուղական համայնքում չի գործում նախադպրոցական հաստատություն:

**Աղյուսակ 1. Շենքեր, նախադպրոցական հաստատություններ, կարողություններ**

	համայնքների քանակը	համայնքներ, որտեղ գործում է նախադպրոցական հաստատություն	նախադպրոցական հաստատությունների քանակը			չօգտագործվող շենքերի քանակը	տեղերի քանակը գործող նախադպրոցական հաստատություններում (երեխա)
			ընդամենը	մանկ.	մ/մ		
Արարատ	29	12	20	9	11	10	2800
Սպիտակ	22	1	2	1	1	2	

**Աղյուսակ 2. Հաճախումներ, ընդգրկվածություն, ֆինանսական միջոցներ**

	0-6 տարեկանների թիվը	0-6 տարեկաններից ընդգրկվածների թիվը	0-6 տարեկանների ընդգրկվածության ցուցանիշներ				նախադպրոցական հաստատություններում աշխատողների թիվը			աշխատողների կրթությունը			տարեկան միջին ծախսը մեկ երեխայի վրա (դրամ)			հաստատության տարեկան միջին բյուջեն (դրամ)
			ընդամենը	1,5տարեկանները հաճախողների մեջ	1,5-3 տարեկանները հաճախողների մեջ	4-6 տարեկանները հաճախողների մեջ	ընդամենը	կին	տղ	բարձր	մ/մ	միջնակարգ	ընդամենը	համայնքային բյուջե	ծնողական մուծումներ	
Արարատ	6720	1546	23%	1%	17%	82%	430	395	35	13%	53.8%	33.2%	74500	66300	8200	5 700 000
Սպիտակ	3000	176	5.8%	9%	18%	73%	46	42	4	26%	27%	47%	71600	59500	12100	6 300 000

- Արարատի տարածաշրջանն ունի 31 համայնք (2 քաղաք, 29 գյուղ), գործող 20 ն/դ հաստատություններից 8-ը քաղաքային են
- Սպիտակի տարածաշրջանն ունի 22 համայնք (1 քաղաք, 21 գյուղ), գործող 2 նախադպրոցական հաստատությունները գտնվում են Սպիտակ քաղաքում
- հատուկ կարիքներով երեխաները ն/դ հաստատություններում ընդգրկված չեն
- չկան վիճակագրական տվյալներ
  - o ընդգրկվածների մեջ աղքատ ընտանիքների երեխաների թվի վերաբերյալ,
  - o ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5/6) երեխաների ընդգրկվածության վերաբերյալ,
  - o ընդգրկվածության վերաբերյալ ըստ քաղաք-գյուղ բաժանման,
- Մոտավոր գնահատմամբ Սպիտակի տարածաշրջանում ն/դ հաստատություններ են հաճախում 5/6 տարեկանների միայն 6,5%-ը:



## **Ծրագրի իրականացման մեխանիզմները կամ մոտեցումները**

Ծրագրերի իրականացմանը կարող է ցուցաբերվել երկու մոտեցում.

ա) Ծրագրի իրականացման թիրախային համայնքները **որոշվում են** ծրագրի սկզբում նախատեսված ուսումնասիրության և մոնիթորինգի արդյունքում, որոնց ցանկը քննարկվում և հաստատվում է ծրագրի խորհրդում:

Քննարկելով հարցը ընտրված համայնքների/հաստատությունների հետ՝ այս տարբերակի դեպքում հստակորեն կարելի է նախապես որոշել իրականացման մոդելները, սահմանել ֆինանսավորման աղբյուրները, տարբեր մասնակիցների ներդրումների չափն ու եղանակը, ինչպես նաև քննարկել շարունակականության համար անհրաժեշտ ռեսուրսների ու մեխանիզմների հարցը:

բ) Իրականացվում են խթանման աշխատանքներ մրցույթում հայտ ներկայացրած համայնքների ղեկավարների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների և դպրոցների տնօրենների մասնակցությամբ: Առաջարկությունները գալիս են համայնքներից: Այս դեպքում կատարվում է ծրագրերի **մրցութային ընտրություն** և որոշվում են նաև ֆինանսավորման աղբյուրները :

Այս մոտեցման դեպքում փորձնական ծրագրերի ընտրության մեխանիզմը հետևյալն է.

- Կհայտարարվի ծրագրին մասնակցող համայնքների/հաստատությունների ընտրության մրցույթ՝ ըստ հետևյալ ենթախմբերի.
  - քաղաքային համայնքներ
  - գյուղական համայնքներ, որտեղ կան և՛ դպրոցներ, և՛ մանկապարտեզներ
  - գյուղական համայնքներ, որտեղ չկան մանկապարտեզներ
  - այլ
- Կիրականացվեն խթանման աշխատանքներ համայնքների ղեկավարների և կրթական հաստատությունների տնօրենների համար.
- Յուրաքանչյուր համայնք/հաստատություն, ելնելով իր առանձնահատկություններից, կներկայացնի դրամաշնորհային ծրագիր: Ծրագրին կկցվի հաստատության լրացված անձնագիրը, որը կպարունակի բոլոր անհրաժեշտ տվյալները: Ծրագրերը պետք է հաստատված լինեն համայնքապետի/ավագանու/հաստատության կառավարման խորհրդի /տնօրենի կողմից:
- Ներկայացված ծրագրերի փորձագիտական գնահատման և տեղերում իրավիճակի ուսումնասիրման արդյունքում կընտրվեն շահառու համայնքները և հաստատությունները:

Մրցույթի ընթացքում չի բացառվում նույն համայնքից մեկից ավելի ծրագրերի ներկայացումը, մասնավորապես դպրոցի և նախադպրոցական հաստատության կողմից, որոնցից կարող է ընտրվել միայն մեկը:

**Փորձնական ծրագրի նախապատրաստման և ընթացիկ սպասարկման պլան-բյուջե և ժամանակացույց.**

**Աղյուսակ 3.**

	Գործողությունը	Ժամկետը		Պատասխանատու կազմակերպությունը և ֆինանսավորողը	Քանակը/թիվը/այլ	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը
		ամիս	տարի				
	<b>Փորձնական Ծրագրի 1-ին փուլ 2006թ</b> (Ծրագրի իրականացում Արարատի և Սպիտակի տարածաշրջաններում քաղաքում)						
1.	Ուսումնասիրություն, կարիքների գնահատում	սեպտեմբեր-նոյեմբեր	2006	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ	2 մարզ	500,0	1000,0
2.	Ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում և թիրախային համայնքների գանկի ճշգրտում	հոկտեմբեր-նոյեմբեր,	2006	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ	2 մարդ- 2 ամիս	100,0	400,0
3.	Միջազգային խորհրդատվություն	ընթացքում	2006-2007	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ, ծրագրի աշխատակազմ	1 մարդ-2այց-7օր	300,0	4200,0
4.	Փորձնական ուսումնական և զարգացման ծրագրի մշակում 5-6 տարեկանների համար ըստ պետական նախադպրոցական կրթական չափորոշիչի	հոկտեմբեր-դեկտեմբեր	2006	ՀՀ ԿԳՆ/դոնոր կազմակերպություններ	3 մարդ-3 ամիս	100,0	900,0
5.	Աշխատանքային խմբի այցելություն որևէ երկիր՝ ուսումնասիրելու նոր մոտեցումները և միջազգային փորձը	հոկտեմբեր-դեկտեմբեր	2006-2007	ՀՀ ԿԳ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ	5	2500,0	12500,0
6.	Ծրագրի իրականացման նորմատիվային փաստաթղթերի մշակում և լրամշակում՝ ելնելով փորձարկման արդյունքներից	ընթացքում	2006-2008	ՀՀ ԿԳ նախարարություն,	4 մարդ-6ամիս	100,0	2400,0
7.	<b>Ծրագրի մասնակիցների ընտրություն</b>		<b>2006-2007</b>			<b>0</b>	<b>0</b>

	Գործողությունը	Ժամկետը		Պատասխանատու կազմակերպությունը և ֆինանսավորողը	Քանակը/թիվը/այլ	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը
	խթանման աշխատանքներ, ծրագրի առաջարկներ մշակելու հետադարձությունների ուսուցում, տեխնիկական աջակցություն	դեկտեմբեր	2006	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ	2	300,0	600,0
	Ծրագրերի առաջարկների մշակում	հունվար	2007	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ		0	0
	ներկայացված առաջարկների ուսումնասիրություն, քննարկում, ծրագրերի ընտրություն, պայմանագրերի կնքում	փետրվար-մարտ	2007	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ		0	0
8.	ծրագրերի իրականացում	մարտ-նոյեմբեր	2007	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ, ծրագրի աշխատակազմ		0	0
9.	ծրագրի մասնակիցների վերապատրաստում, այդ թվում ուսումնական նյութերի մշակում և բազմացում	ընթացքում	2006-2007	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ, ծրագրի աշխատակազմ	30	90,0	2700,0
10	Մոնիտորինգ և գնահատում, փորձագիտական օժանդակություն	ծրագրի ընթացքում	2007	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ	10միկրոծրագիր-2այց-2օր-2մարդ=80մարդ/օր	15,0	1200,0
11	ծրագրերի հաշվետվությունների ներկայացում	հունվար	2008	ՀՀ ԿԳՆ, ծրագրի աշխատակազմ		0	0
12	Փորձնական ծրագրի 1-ին փուլի ընթացիկ/ամփոփիչ գնահատում (վերլուծություն և առաջարկություններ այլ մարզերում ծրագրի ներդրման վերաբերյալ)	հոկտեմբեր, փետրվար	2007-2008	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ	2	1000,0	2000,0
13	Ծրագրի աշխատակազմ		2006-2008	ՀՀ ԿԳՆ/ՀԲ/դոնոր կազմակերպություններ	2մարդ-20ամիս	200,0	8000,0
14	Ընթացիկ ծախսեր, այդ թվում ծրագրի լուսաբանում		2006-2008		20 ամիս	150,0	3000,0
	Ընդամենը						38900,0

**Ծրագրի մասնակիցները, շահառուները և նրանց պատասխանատվությունը**

**Աղյուսակ 4.**

<i>կազմակերպությունը</i>	<i>ինչի՞ համար է պատասխանատու</i>	<i>ձեռքբերումները</i>
<p><b>ՀՀ ԿԳ նախարարություն (այդ թվում ԿԾԿ, ԿԱԻ)</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• քաղաքականության մշակում</li> <li>• փորձնական ծրագրի օրենսդրական ապահովում, օրենսդրության բարելավում</li> <li>• փորձնական ծրագրի ֆինանսավորման համակարգում</li> <li>• ծրագրի աշխատանքների համակարգում</li> <li>• ծրագրերի փորձաքննություն և ընտրություն</li> <li>• ուսումնական ծրագրերի մշակում</li> <li>• ծրագրերի իրականացման կառավարում</li> <li>• վերապատրաստումների պլանավորում, դասընթացների մշակում և դրանց կազմակերպում</li> <li>• ծրագրի մոնիթորինգ, տեխնիկական աջակցություն և գնահատում</li> <li>• ծրագրի լուսաբանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• կարողությունների զարգացում</li> <li>• զարգացման ապագա ծրագրերի մշակման նախադրյալների ստեղծում</li> <li>• ոլորտի աշխատանքների համակարգման ինստիտուցիոնալ փորձառության զարգացում</li> </ul>
<p><b>Միջազգային կամ դոնոր կազմակերպություններ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ծրագրերի իրականացում և աջակցություն իրականացնող այլ կազմակերպությունների և անհատների կողմից</li> <li>• ընթացիկ մոնիթորինգ, մասնակցություն միջանկյալ և ամփոփիչ գնահատմանը</li> <li>• տեխնիկական աջակցություն</li> <li>• գնահատում</li> <li>• աջակցություն շնորհանդեսների կազմակերպմանը</li> <li>• աջակցություն ծրագրի լուսաբանմանը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• կարողությունների զարգացում</li> <li>• նոր ծրագրերի մշակման և ներդրման փորձառության ձեռքբերում</li> <li>• երեխայի իրավունքների իրացման և այլ դեմոկրատական արժեքների ուղղությամբ իրենց առաքելությունների կատարում</li> </ul>
<p><b>Մարզպետարանների կրթության վարչություններ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• տվյալների հավաքում, վերլուծություն, ամփոփում</li> <li>• խթանման աշխատանքների իրականացում</li> <li>• մասնակցություն իրականացվելիք ծրագրերի ընտրությանը՝ կատարելով տեղական մոնիթորինգ և պարզելով ծրագրերի իրականացնելույան մակարդակը</li> <li>• տեխնիկական աջակցություն ծրագրերի մշակմանը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>•</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• հետադարձ կապի ապահովում, տեղեկատվության փոխանցում</li> <li>• հաշվետվությունների պատրաստում և ներկայացում</li> <li>• ծրագրի մոնիթորինգ</li> <li>• ծրագրերի լուսաբանում տեղական ՋԼՄ-ներով</li> </ul>	
<b>ՏԻՄ (Համայնքեր)</b>	<ul style="list-style-type: none"> <li>• համայնքի իրավիճակի վերլուծություն</li> <li>• կարիքների ճշգրտում, համայնքի համախմբում, ծրագրի առաջարկի մշակում և ներկայացում</li> <li>• ծրագրի իրականացում կամ աջակցություն ծրագրի իրականացմանը,</li> <li>• ծրագրի առաջարկում նախատեսված ներդրումների ապահովում</li> <li>• հաշվետվությունների պատրաստում և ներկայացում</li> <li>• ծրագրերի շարունակականության մեխանիզմների մշակում և առաջարկությունների ներկայացում</li> <li>• ծրագրերի լուսաբանում համայնքում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• կարողությունների զարգացում</li> <li>• համայնքի ներգրավում որոշումների կայացման մեջ</li> <li>• համայնքի ինքնուրույն կառավարման գիտելիքների և հմտությունների զարգացում</li> </ul>
<b>Ծնողներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• մասնակցություն առաջնահերթ կարիքների հայտնաբերմանը,</li> <li>• մասնակցություն ծրագրի առաջարկի մշակմանը</li> <li>• ակտիվ մասնակցություն ծրագրի իրականացմանը</li> <li>• ներդրումների կատարում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• մասնակցություն և գիտելիքների ու հմտությունների ձեռքբերում իրենց երեխաներին վերաբերող հարցերում որոշումների կայացման գործում</li> </ul>
<b>Դպրոցներ/ նախադպրոցական հաստատություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• փորձնական ծրագրերի մշակում,</li> <li>• ծրագրերի իրականացում</li> <li>• ինքնագնահատում</li> <li>• հաշվետվությունների մշակում և ներկայացում</li> <li>• ծրագրի հրապարակայնության ապահովում համայնքում</li> <li>• շնորհանդեսների կազմակերպում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• նոր մոտեցումների մշակման կարողությունների զարգացում</li> <li>• նորարարական աշխատանքների փորձառություն</li> <li>• կարողությունների զարգացում</li> </ul>

## **Ծրագրի իրականացման մոդելների նկարագրություն**

### Հիմնական ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետությունում 0-ից մինչև 6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում միջինում կազմում է 19.1% (քաղաքներում՝ 27.9%, գյուղերում՝ 8.1%): Դա նշանակում է, որ միջինում՝ յուրաքանչյուր տարածաշրջանում անհրաժեշտ կլինի փորձնական ծրագրի ընթացքում ընդգրկվածությունը ավելացնել միջինում 10%-ով՝ ընդ որում հիմնական շեշտը դնելով գյուղական բնակավայրերի վրա (ծրագրի հավելված 2.1):

Ստորև ներկայացվում է առաջարկվող մոդելների նկարագրությունը և դրանց ներդրման համար պահանջվող ֆինանսական ծախսերի մոտավոր հաշվարկներ

### **Մոդել 1. Դպրոցներում իրականացնել նախադպրոցական կրթական ծրագրեր 5-ից մինչև 6 տարեկանների համար, ապահովելով ազատ և համակողմանի զարգացման միջավայր և կիրառելով ուսուցողական ակտիվ մեթոդներ:**

Այս մոդելը նախատեսում է բացել 1-ամյա նախադպրոցական դասարաններ հիմնականում այն համայնքների հանրակրթական դպրոցներում, որտեղ չկան նախադպրոցական հաստատություններ: Այս մոդելով դպրոցի դասասենյակներից մեկը վերածվում է նախադպրոցական խաղասենյակ-դասարանի: Մոդելը արդյունավետ է և քիչ ծախսատար: Այն հեշտությամբ կարող է իրականացվել գյուղական վայրերում: Մոդելի առավելությունն այն է, որ հիմնվում է դպրոցների առկա խոշոր ցանցի վրա:

Կընդգրկվեն հիմնականում 5-6 տարեկանները՝ ծնողների դիմումների հիման վրա: Կստեղծվեն համապատասխան պայմաններ, որոնք հնարավորինս մոտ կլինեն ընտանեկանին, նպաստելով՝ յուրաքանչյուր երեխայի ազատ և դինամիկ շարունակական զարգացմանը, մտավոր, ֆիզիկական և ստեղծագործական կարողությունների լիարժեք դրսևորմանը: Արդյունքում ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկված երեխաները կզարգացնեն իրենց ինքնուրույն ստեղծագործական կարողությունները, ձեռք կբերեն համագործակցելու և թիմով աշխատելու հմտություններ, կկարողանան կազմակերպել իրենց առօրյան և արդյունքում նաև պատրաստ կլինեն դպրոցին:

Հեռավոր բնակավայրերում, որտեղ տարրական դասարանները թերկոմպլեկտավորված են և նախադպրոցական դասարանում ընդգրկված 5 տարեկան երեխաների թիվը փոքր է, կարելի է ստեղծել խառը դասարան, որտեղ կլինեն և 1-ին դասարանցիները և նախադպրոցական տարիքի երեխաները:

Ստորև ներկայացվում է առաջարկվող մոդելի և անհրաժեշտ ծախսերի ընդհանուր նկարագրությունը:

**Աղյուսակ 5.**

Չափորոշիչ	Առաջարկություն	Հայտնի/ հաշվարկային ծախսեր	Հիմնավորում/Քննարկում
Երեխաների թիվը մեկ դասարանում	Առավելագույնը 25 երեխա  Փոքրաթիվ բնակչությանը համայնքներում կարելի է կիրառել բազմատարիքային դասարանների մոդելը՝ 5-7/8 տարեկանները միասին	0	Փորձնական ծրագրում այս մոդելը հիմնականում կիրականացվի այն բնակավայրերում, որտեղ մանկապարտեզներ չկան: Երեխաների թիվը կախված կլինի նաև համայնքում առկա 5/6 տարեկանների թվից, դիմումների քանակից, ինչպես նաև ֆիզիկական պայմաններից
Պարապմունքների հաճախականությունը	Շաբաթը երեքից հինգ օր,	0	
Ուսուցման ժամերը	Օրական 2-3 ժամ Օրինակ՝ առավոտյան 9:00-12:00	0	Սնունդ չի նախատեսվում, սակայն այլ լուծումներ կարող են գտնվել
Ծրագրի գործունեության ժամանակաշրջանը տարվա ընթացքում.	Ծրագիրը գործում է մեկ տարվա ընթացքում 8-9 ամիս տևողությամբ:	0	Իրականացվում է դպրոցական ուսումնական տարվա ընթացքում
Մանկավարժ/երեխա թվային հարաբերությունը	միջինում 1/20 Մեկ խմբի համար մեկ լրիվ դրույթով աշխատող մանկավարժ  ընդգրկված երեխաների ծնողների թվից ընտրված մեկ կամավոր օգնականով՝ որը ընթացքում կարող է փոխարինվել մեկ ուրիշով	0	Ցանկալի է որ սկզբնական ամիսների ընթացքում (սեպտ. - դեկտեմբեր), երբ երեխաները հարմարվելու խնդիրներ են ունենում, մանկավարժին օգնի համայնքային կամավոր
Տարիքային խումբ	5-ից 6 տարեկան երեխաներ	0	Ծրագիրն ուղղված է երեխայի համակողմանի զարգացման պայմանների ստեղծմանը և դպրոցին նախապատրաստելուն: Ոիստի ընդգրկվում են հաջորդ տարի առաջին դասարան գնացողները:
<b>Աշխատավարձ</b>			
Աշխատողների թիվը ծրագրում	Լրիվ դրույթով 1 աշխատող և 1 կամավոր	480000	Հիմք ընդունելով «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը՝ 1 դրույթը սահմանել նվազագույն միջինում աշխատավարձի կրկնապատիկը:
Լրացուցիչ աշխատողներ	Համայնքային կամավոր	0	Սա կլինի ծնողների ներդրումը,  Այլ աշխատողներ չեն ավելանում, քանի որ կազմակերպվում է դպրոցում

Նպաստներ և ապահովագրություն	Լրիվ դրույքով 1 աշխատողի համար	152600	Աշխատավարձի 31.8%
Ծրագրի ընթացիկ կառավարում		0	Իրականացվում է դպրոցի կողմից, անվճար
<b>Ընդամենը աշխատավարձ</b>		<b>632600</b>	
<b>Այլ ուղղակի/ընթացիկ ծախսեր</b>			
Նյութեր և պարագաներ	Սպառողական նյութեր՝ գրքեր, տետրեր, թուղթ, գրիչներ, մատիտներ, կավիճ, ջրաներկ	50000	Նյութերի և պարագաների հաշվարկային ծախսը մեկ երեխայի համար 2005թ. մանկապարտեզներում կազմել է 200դրամ: Այն անբավարար է և պետք է ավելացնել առնվազն 10 անգամ՝ 25X2000դրամ
Հեռախոս/փոստ	Ծնողների հետ կապի համար	52350	Հաշվարկային ծախսերի համար հիմք են ընդունվել համայնքների կողմից 2005թ. կատարած փաստացի ծախսերի միջինը (200դրամ. մեկ երեխայի համար մեկ տարում): Հաշվարկն արվել է 25 երեխայի հաշվով: Հաշվարկվել է գումարի 50%-ը:
Ջրմուղ/կոյուղի	Վճարելու է դպրոցը, կամ նախատեսվում են լրացուցիչ միջոցներ դպրոցի 1 երեխայի հաշվով հաստատված նորմատիվների շրջանակում	7900	Ըստ ՀՀ ԿԳ Նախարարության կողմից հաստատված նորմատիվների 316.3 դրամ/աշ: 316.3X2
Էլեկտրաէներգիա		14000	Ըստ ՀՀ ԿԳ Նախարարության կողմից հաստատված նորմատիվների՝ 1 կվ/ժամը=25 դրամի դեպքում մեկ աշակերտի համար տարեկան՝ 560 դրամ: 25x560=14000դրամ
Վառելիք և ջեռուցում	կջեռուցվի օրվա կեսը	49820	Ըստ ՀՀ ԿԳ Նախարարության կողմից հաստատված նորմատիվների՝ 1 սեզոնում տաքացվող օրերի միջին թիվը կազմում 90օր, միջինում օրական 9.4 կվ/ժամ 1 ջեռուցիչի համար: 2ջեռ. x9.4x106x25դրամ/կվ=49820դր
Այլ կոմունալ ծախսեր		1905	Ըստ ՀՀ ԿԳ Նախարարության կողմից հաստատված նորմատիվների՝ 76.2 դրամ/աշ: 76.2 x 25=1905
<b>Ընդամենը ընթացիկ ծախսեր</b>		<b>175975</b>	
<b>Մեկնարկային/ներդրումային ծախսեր</b>			



Տարածքի նախնական նորոգում	Դասասենյակի վերանորոգում.	400000	Դպրոցների մեծ մասն ունի չօգտագործվող, սակայն ֆիզիկապես մաշված սենյակներ: Մեկ սենյակի վերանորոգման համար միջինում ծախսվում է մոտ 400000 դրամ
Կահավորանք	Սեղաններ, աթոռներ, գրապահարաններ, դարակներ	545000	Անհրաժեշտ է նոր կահույք ըստ տարիքային պահանջների, ինչպես նաև սենյակների կահավորում գորգերով և այլ փափուկ կահույքով: Սեղաններ խմբային աշխատանքի համար՝ 6հատ և 25 աթոռներ, գորգ մոտ 30 քառ.մ
Ուսումնական կամ ուսուցողական նյութեր	Գրքեր, խաղալիքներ, ուսուցողական նյութեր, ռեբուսներ, մեծ խաղալիքներ դերային խաղերի համար	307500	Սրանք շատ կարևոր են մեկնարկի համար: Նյութերի մի մասը ժամանակի ընթացքում անհրաժեշտ է համալրել: Ըստ Քայլ առ Քայլ ծրագրի
